«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

նախագահ՝ Հ.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկիի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկիի պետական քոլեջի» ՊՈԱԿ –ի «Ընդունելության» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի է մտնում ընդունման պահից:

-2022-

Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքները, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը», ՀՀ ԿԳՆ «Արթիկիի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ՀՀ ԿԳՆ «Արթիկիի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող անձանց դիմումներով:

3. Ընդունելություն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ սույն կարգի 14-րդ կետով սահմանված՝ մրցութային հիմունքներով, բացառությամբ՝ «Դիզայն» և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների:

4. Օտարերկրացիները՝ իրենց ընտրությամբ Քոլեջ կարող են ընդունվել սույն կարգով՝ միայն վճարովի համակարգ կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

4.1. ՀՀ երկքաղաքացիները և ազգությամբ հայ օտարերկրացիները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրով կարող են դիմել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ օտարերկրացիների համար ՀՀ կառավարության սահմանված կարգով՝ իրենց ընտրությամբ:

Ընդունելության պայմանները

5. Քոլեջն ընդունելությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝

1) արհեստագործական և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա (ստացիոնար) ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան.

6. Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ԿՏԱԿ-ը՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում,իսկ տնօրենը Հաստատության Դիմորդի անկյունում,պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցի էջում հրապարակում են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարություն.

7. Առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ընդունվում են կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից սկսած .

1.Ոչ ոլորտային մասնագիտություններով՝մինչև օգոստոսի 15-ը ներառյալ՝ժամը 18:00

2.Ոլորտային մասնագիտություններով՝մինչև օգոստոսի 3-ը ներառյալ՝ ժամը 18:00

(«Դիզայն»և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությունների համար՝ Քոլեջի սահմանած ընդունելության քննության օրվանից 2 օր առաջ, մինչև օգոստոսի 3-ը ներառյալ՝ ժամը 18:00):

Ընդունելության քննությունները անցկացվում են օգոստոսի 5-ից-15-ը ընկած ժամանակահատվածում:

7.1 Դիմորդների կողմից դիմում հայտերը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կարող են փոփոխվել մինչև գործերի ընդունման օրվա ավարտը:

8. Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է փաստաթղթերի ընդունման,իսկ ոլորտային մասնագիտությունների գծով՝քննությունների ավարտման հաջորդ աշխատանքային օրը:

8.1 Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

8.2 Մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո տնօրենը 2 աշխատանքային օրվա ընթացքում «Mulberry» փաստաթղթաշարժի համակարգ միջոցով ԿՏԱԿ է ներկայացնում մրցույթի արդյունքում ըստ մասնագիտությունների,կրթական հիմքի և ուսուցման ձևի թափուր մնացած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընդունելության հանձնաժողովը

9. Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) ընդունելության տեղերը հատկացնելուց հետո՝ 5 օրվա ընթացքում ՀՀ ԿԳՍՄՆ «Արթիկիի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում տնօրենի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:

10. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը՝ տնօրենը, նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները:

11. Քննության անցկացման նպատակով ստեղծվում է քննական հանձնաժողով՝ համաձայն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

12. Ընդունող հանձնաժողովի նախագահը՝ ընդունելության տեղերը հատկացնելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում Լիազորված մարմին է ներկայացնում քննական հանձնաժողովների նախագահ(ներ)ի թեկնածություն(ներ)ը,իսկ քննության օրերը Լիազորված մարմին և ԿՏԱԿ:

13. Ընդունող հանձնաժողովը սույն կարգի և հաստատության տնօրենի հաստատած աշխատանքային պլանին համապատասխան ապահովում է՝

1.առկա /ստացիոնար/ ուսուցման ընդունելության կազմակերպումն ու անցկացումը:

2. դիմորդների առցանց եղանակով ստացվածընդունելության փատաթղթերի ընդունումը և գրանցամատյանի վարումը:

3.մասնագիտական կողմնորոշման նպատակով դիմորդների համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը

4.Ընդունելության կարգով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդներից անհրաժեշտ փատաթղթերի բնօրինակների ընդունումը և ձևակերպումը:

5.Ընդունելության մրցույթի անցկացումը և Հաստատությունը ընդունված դիմորդներին հրամանագրելու մասին որոշման ընդունումը

6.Ընդունելության կազմակերպման համար համապատասխան տարածքի հատկացումը,

7. .Ընդունելությանն առնչվող անհրաժեշտ փատաթղթերի ձեռքբերումը,ձևակերպումը

Ընդունելության դիմումը

14. Դիմորդը՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում էլեկտրոնային եղանակով լրացնում է՝ դիմում հայտը,որը իր մեջ ներառում է անձնական տվյալներ և կից ներբեռնվում է նաև՝

1) լուսանկար 2) կրթության մասին փատաթղթի պատճենը, 3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը, 4) կցագրման վկայականի պատճենը, 5) սույն կարգով սահմանված՝ ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), որը տնօրենը ուսանողին հրամանագրելուց հետո՝ 2-օրյա ժամկետում ներկայացնում է Լիազորված մարմնին, 6) իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստատթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝ վարպետային որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճեն (առկայության դեպքում), 7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոնների գնահատականների վերաբերյալ փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում)):

15.Արթիկի պետական քոլեջի հաշվեհամարին փոխանցած գումարի անդորրագրի պատճեն:Վճարվում է 1000/հազար/դրամ ՀՀ դրամ.անկախ ընդունելության արդյունքից գումարը հետ չի վերադարձվում:

16.Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության՝ որակավորման,մասնագիտացման հայտագրմամբ՝անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

17. Ընդունելության մրցույթից դուրս, պահուստային տեղերի հաշվին ընդունվում են՝

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 27-ի « Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանելու մասին» № 545 որոշման պահանջներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան արտոնություններ ունեցող դիմորդները:

Ընդունելության մրցույթը

18. ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկիի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում մրցույթն անց է կացվում ըստ մասնագիտությունների՝տվյալ Հաստատություններում՝կրթության կառավարման տեղեկատվական համակարգում գրանցված դիմորդների հայտերի հիման վրա:

19.Ընդունելության մրցույթն անցկացվում է Լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում՝հետևյալ սկզբունքով.

1)Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի ,միջնակարգ կրթության ատեստատի միավորների/այդ թվում՝ քննական/, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական,բարձրագույն մասնագիտականկրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար ընդունելության կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը.

2)Ֆիզիկական կուլտուրա և սպորտ և Դիզայն մասնագիտություններով անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի ,միջնակարգ կրթության ատեստատի միավորների/այդ թվում՝ քննական/, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական,բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների և քննական առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեղոց դիմորդը:

3) միջնակարգ կրթության հիմքով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգով ընդունված ուսանողին.

4) միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված և ՀՀ օրենքներով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց, որոնց վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 %-ի չափով՝ համաձայն

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին ու երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, որոնց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամի սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձանց կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (զորացրվելուց հետո 3 տարվա ընթացքում) դիմորդներից ամենաբարձր միավոր ունեցող անձանց (ուսումնական հաստատություններին Հայաստանի հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում)՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

20. Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննություններն անցկացնում են քննական հանձնաժողովները՝ տնօրենի հաստատված ժամանակացույցի համաձայն: Հատատությունը՝ լիազոր մարմնի կողմից տեղերը ստանալուց հետո ժամանակացույցը 2 աշխատանքային օրվա ընթացքում փակցնում է Քոլեջում՝ ի տես բոլորին և ներկայացնում է ԿՏԱԿ և Լիազոր մարմին:

21. Դիմորդը ընդունելության քննության է ներկայանում անձնագրով (մինչև 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայականով) և քննական թերթիկով:

22.Հաստատության ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված քննությունների արդյունքների ցուցակները փակցվում են ի տես բոլորի ոչ ուշ,քան տվյալ քննության հաջորդ օրվա ժամը 12:00-ը:

23. Ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների հրապարակումից հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 25-ը ներառյալ Լիազորված մարմին է ներկայացվում ընդունելության վերաբերյալ հաշվետվությունը և արդյունքները՝ ըստ ընդունելության սահմանված կարգի:

Ուսանողի հրամանագրումն և ուսումնառությունը

24. Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են էլեկտրոնային եղանակով լրացված դիմումը ,սույն կարգով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերին նոտարական հաստատումով (վավերցված) պատճենը:
25. Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Քոլեջի տնօրենը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է որպես ուսանող:

26.Թափուր տեղերի առայության դեպքում մրցութային հիմունքով քոլեջ կարող է ընդունվել ընթացիկ տարում մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդը ,ով մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 22-ը ներառյալ մինչև ժամը 18:00 ԿՏԱԿ-ի կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կներկայացնի կարգով պահանջված փաստաթղթերը:

Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ, քան հրամանագրման օրը:

27. Տնօրենը հրամանագրված դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որտեղ ամրագրվում են ուսանողի ընտրված մասնագիտությունը, ուսուցման ձևը, ուսանելու տարիների տևողությունը, ուսման վարձի չափը:

28. Ուսանողին հանձնվում է պայմանագրի երկրորդ օրինակը ուսանողական տոմսը և առաջադիմության գրքույկը:

29. Քոլեջ չընդունված դիմորդին վերադարձվում են պահանջված փաստաթղթերը՝ իսկ դրանց պատճենները, ինչպես նաև քննական աշխատանքները պահպանվում են 6 ամիս, որից հետո ոչնչացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

30. Սույն կարգի իրականացումը վերահսկում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը :